

**Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 3-ի նիստի**

**Մասնակցում էին՝** հանձնաժողովի 29 անդամներից 18-ը

**Հրավիրված էին՝** ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալ Գ.Հայրապետյանը, Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի ներկայացուցիչ, մարդահամարի հարցերը համակարգող Ա. Հովհաննիսյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչությունից՝ Վ.Գևորգյանը և Է.Սանամյանը:

**Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.**

1. ՀՀ 2011 թ. հոկտեմբերի 12-21- ն անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման վիճակը ՀՀ մարզերում և ք.Երևանում՝ տեղեկությունների հավաքագրման նախաշեմին (ամփոփված 03.10.2011թ. դրությամբ):
2. Այլ հարցեր:

**Բացման խոսքով** հանդես եկավ նիստը նախագահող՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ **պրն. Ա. Գևորգյանը**: Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին և առաջարկեց հաստատել ՀՀ ԱՎԾ ներկայացրած օրակարգի նախագիծը, եթե առաջարկություններ չկան: Այլ առաջարկություններ չեղան և օրակարգը հաստատվեց: Օրակարգի առաջին հարցը ներկայացնելու համար նա խոսքը տվեց ՀՀ ԱՎԾ Նախագահ, հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ստեփան Մնացականյանին:

**Ա. Մնացականյանը** - ներկայացրեց «ՀՀ 2011 թ. հոկտեմբերի 12-21- ն անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման վիճակը ՀՀ մարզերում և ք.Երևանում՝ տեղեկությունների հավաքագրման նախաշեմին (ամփոփված 03.10.2011թ. դրությամբ)» խորագրով համակարգչային ներկայացմամբ համառոտագրերի բովանդակությունը՝ 16 պատկեր (կցվում են): Նա առաջարկեց հանձնաժողովի քարտուղար Կ.Կույումջանին էկրանին ցուցադրել նաև ՀՀ ԱՎԾ կայք էջից «Մարդահամար 2011» խորագրով հատվածն իր բոլոր ենթաբաժիններով, որոնցում տեղակայված են «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ ՎՊԽ որոշումները, որոնցով կարգավորվում են մարդահամարի անցկացման իրավահարաբերությունները, ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի բոլոր նիստերի արձանագրություններն ու բոլոր որոշումները և իրազեկման նպատակով այլ նյութեր: Ցուցադրվեց նաև Facebook սոցիալական կայքում բացված «Մարդահամար 2011» խորագրով հատուկ էջը, որի միջոցով տարածվում են նաև մարդահամարի իրազեկման և գովազդային բոլոր գործիքները և այդ էջից, մուլտֆիլմի ձևաչափով, ցուցադրվեց գովազդային տեսահոլովակը:

**Ա. Գևորգյանը** - նշեց, որ իրեն անհանգստացնում է հասցեային տնտեսության կարգավորման հետ կապված՝ տների համարակալման և փողոցների

անվանատախտակների տեղադրման հարցը, ինչն ամբողջապես դեռ ավարտված չէ:

**Ա. Մնացականյանը** – պարզաբանեց, որ ներկայացմամբ բերված տեղեկատվական ցուցանիշները կազմված են ըստ մարզպետարանների տվյալների, մարզպետարաններից հայտնել են, որ աշխատանքներն ընթացքի մեջ են, հատկապես ներկով և կավիճով համարակալումները գյուղական համայնքներում կատարվելու են մարդահամարի սկզբին նախորդող օրերին:

**Կ. Կարապետյանը** – (Երևանի քաղաքապետ) ավելացրեց, որ Երևան քաղաքում համարակալման աշխատանքները կատարվում են հիմնավոր կերպով՝ մնայուն անվանացույցերի տեսքով և կավարտվեն մինչև հոկտեմբերի 10-ը:

**Ա. Գևորգյանը** – հարցրեց թե, երբ անհրաժեշտ կլինի անցկացնել հանձնաժողովի հաջորդ նիստը, տեղեկատվության հավաքագրման, թե» դրանից հետո:

**Ա. Մնացականյանը** – նշեց, որ անհրաժեշտություն կառաջանա կամ նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի կեսին, եթե տեղեկատվության հավաքագրման ընթացքում արտառոց դեպքեր և իրավիճակներ չառաջանան, որոնց քանակը որակի վերաճելու միտում կդրսևորի:

**Ա. Գևորգյանը** – շնորհակալություն հայտնեց Հայ Առաքելական Եկեղեցուն պատրաստակամության հայտնելու մարդահամարի իրազեկմանն աջակցելու գործում, նաև այն մասնավոր ընկերություններին, որոնք սկսել են աջակցել մարդահամարի իրազեկման աշխատանքներին, ինչպես նաև բոլոր այն միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա պետություններին, որոնք աջակցել և աջակցում են մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին:

**Ա. Մնացականյանը** – պ-ն Ա. Գևորգյանին հայտնեց միջազգային կազմակերպությունների և մարդահամարին օժանդակող միջազգային և օտարերկրյա փորձագետների շնորհակալության խոսքն առ այն, որ պարոն Գևորգյանը հետևողականորեն կազմակերպական և կոորդինացիոն ջանքերով առավել գործունակ աջակցություն է ապահովում ՀՀ ԱՎԾ-ին, մարդահամարի նախապատրաստման և իրագործման գործընթացներում:

**Հանձնաժողովի նախագահ**

**ՀՀ փոխվարչապետ,**

**ՀՀ տարածքային կառավարման նախարար**

**Ա. Գևորգյան**

**Հանձնաժողովի քարտուղար**

**ՀՀ ազգային վիճակագրական ծառայության**

**աշխատակազմի մարդահամարի և**

**ժողովրդագրության բաժնի պետ**

**Կ. Կույումջյան**